# <<ՍԱՐԳԻՍ ԵՎ ՊԱՊ>>

## ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ, Վեդի համայնք, Եղեգնավան բնակավայր
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093-56-55-66, s.ghazaryan@mail.ru

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

Հարգելի պարոն նախարար

«Սարգիս և Պապ» ՍՊԸ ընկերությունը ՀՀ Արարատի մարզի Եղեգնավանի ավազի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 22.01.2015թ.-ի ՆՇԱԹ-29/521 ընդերքօգտագործման թույլտվության:

Տեղամասերի շահագործման ընթացքում ընկերության կողմից կատարվում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ արտանետվող անօրգանական փոշու մշտադիտարկում,
2. արտադրական հրապարակի տարածքում նավթամթերքների արտահոսքերի մշտադիտարկում,
3. հարակից տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ՝ դիտողական զննման եղանակով :

Ստորև ներկայացնում եմ 2024 թվականի ընթացքում Եղեգնավանի ավազի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերի տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

Հարգանքով՝

«Սարգիս և Պապ» ՍՊԸ տնօրեն՝ Ս. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № 01-2064
«14» 02 2025թ.